

ձեռք պիտի առնէ Հայաստանի բարեկարգութեան խնդիրն, զոր այնչափ եռանդով պաշտպանեց:

Խնդիրներ կան, որ պտուղներու կնմանին – պահուելով կհասունանան, թէպէտեւ կան ալ, որ պահուելով կփտտին:

Աղօթենք, որ մեր խնդիրն վերջիններէն չըլլայ:

## 20 Նոյեմբեր

Կրօնական գործոց խորհրդականն մայրաքաղաքիս թաղական խորհուրդներուն պիտի հարցունէ, թէ կրօնագիտութիւնն ի՞նչ վիճակի մէջ է դպրոցներու մէջ:

Զարմանալի չէ՞ գոյութիւն չունեցող բանի մը վիճակն հարցունելն:

Եւ թաղային վարժարաններու մէջ ի՞նչ ունինք որ կրօնագիտութիւն ունենանք: Սակայն ես գիտնալ կփափաքէի, թէ կրօնագիտութիւնն ի՞նչ վիճակի մէջ է այն կրօնականներուն քով՝ որք գաւառներու մէջ առաջնորդութեան պաշտօն մերժելով՝ մայրաքաղաքէս բաժնուիլ չեն ուզեր:

## 21 Նոյեմբեր

Վանայ ընդհանուր դատախազն յիշեալ քաղաքին մէջ տեղի ունեցած հարստահարութիւնները հերքող տեղեկագիր մը դրկած էր Բ. Դրան:

Գերապատիւ Խրիմեան սրբազան ալ վերոյիշեալ տեղեկագիրը հերքող տեղեկագիր մը դրկած է այս օրերս:

Արդէն ինչ որ հաստատէ Հայրիկն՝ կը ժխտուի Բ. Դոնէն, եւ ինչ որ հաստատել փորձէ Բ. Դուռն՝ կհերքուի Հայրիկէն: Երբ այս վերջինն դիակ մը ներկայացնէ կառավարութեան եւ անոր ժամ մը առաջ քիւրդէ մը սպանուիլն հաստատէ՝ կառավարութիւնն անմիջապէս կհերքէ ըսելով. «ատիկայ մեռած չէ այլ կննջէ. եթէ Հայրիկն քիչ մ'ալ պնդէ՝ ընդհանուր դատախազն կպատասխանէ. մեռած չէ այլ ծնած է. եւ տեղեկագիր մ'ալ կդրկէ Բ. Դրան յայտնելով, թէ այս օրերս Վանայ մէջ երեսուն տարու տղայ մը ծնաւ... մեռած...»:

## 22 Նոյեմբեր

Պ. Տուպլիէ անուն երեւելի ըմբիշն, որ քանի մը շաբաթ ի վեր Բերա Քօնքօրտիայի թատրոնին մէջ մայրաքաղաքիս ըմբիշներուն ասպարէզ կկարդար եւ յաղթանակ կտանէր՝ այս օրերս յաղթուեցաւ Սիմոն անուն բեռնակրէ մը: